



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ  
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

---

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

Քաղ. Երևան

15 հունվարի 2015թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի  
թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Պետրոսյանի  
Անդամակցությամբ՝ Վ. Հովհաննիսյանի  
Հ. Նազարյանի

Ուսումնասիրելով քաղաքացի Խաչատուր Մարոզյանի անհատական դիմումով  
գործը քննության ընդունելու մասին հարցը,

**Պ Ա Ր Զ Ե Ց.**

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ քաղաքացի Խաչատուր Մարոզյանը 2014 թվականի դեկտեմբերի 27-ին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով.

«ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 154 հոդվածի 4-րդ կետը ճանաչել ՀՀ Սահմանադրության 18 հոդվածին հակասող եւ անվավեր»:

Ըստ դիմողի՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 154-րդ հոդվածի 4-րդ կետը խոչընդոտում է մարդու դատարան դիմելու իրավունքը՝ դժվարացնելով եւ անհասանելի դարձնելով այն: Դիմողի կարծիքով, առկա է նաեւ իրարամերժություն, մասնա-

վորապես, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը դատավարության մասնակիցներին տալիս է վճռաբեկ բողոք բերելու իրավունք, իսկ 4-րդ կետը ֆիզիկական եւ իրավաբանական անձանց վճռաբեկ բողոք բերելու իրավունքն արտոնում է միայն փաստաբանին:

Քննության առարկա անհատական դիմումի նախնական ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ դիմողը պահպանել է ՀՀ սահմանադրական դատարան դիմելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի պահանջները, այն է՝

- դիմումում առաջադրված հարցը ենթակա է սահմանադրական դատարանին.
- դիմողն իրավասու է դիմել սահմանադրական դատարան.
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ սահմանադրական դատարանի որոշում.
- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում.
- դիմողն սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Միաժամանակ հարկ է նշել, որ ՀՀ սահմանադրական դատարանի 2014 թվականի դեկտեմբերի 9-ի ՍԴԱՌ-70 աշխատակարգային որոշմամբ «Քաղաքացիներ Արա Սարգսյանի, Դվին Իսանյանսի, Ռուդոլֆ Հովակիմյանի, Մագդա Եղիազարյանի, Արամ Սարգսյանի դիմումների հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 154-րդ հոդվածի 4-րդ մասի, 158-րդ հոդվածի 5-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» միավորված գործի դատաքննությունն սկսելու օր է նշանակվել 2015 թվականի մարտի 3-ը: Ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի պահանջներով՝ հիշյալ գործին կարող է միավորվել քաղաքացի Խ. Մարոզյանի քննության առարկա դիմումով գործը:

Քննության առարկա անհատական դիմումով միջնորդություն է ներկայացվել պետական տուրքի վճարումից ազատելու վերաբերյալ:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31 եւ 69-րդ հոդվածներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

### Ո Ր Ո Շ Ե Ց.

1. «Քաղաքացի Խաչատուր Մարոզյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 154-րդ հոդվածի 4-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործն ընդունել քննության:

2. Առաջարկել քաղաքացի Խաչատուր Մարոզյանի անհատական դիմումով գործը միավորել ՀՀ սահմանադրական դատարանի 2014 թվականի դեկտեմբերի 9-ի ՍԴԱՈ-70 աշխատակարգային որոշմամբ «Քաղաքացիներ Արա Սարգսյանի, Դվին Իսանյանսի, Ռուդոլֆ Հովակիմյանի, Մագդա Եղիազարյանի, Արամ Սարգսյանի դիմումների հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 154-րդ հոդվածի 4-րդ մասի, 158-րդ հոդվածի 5-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» միավորված գործին:

3. Մույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

4. Բավարարել քաղաքացի Խաչատուր Մարոզյանի անհատական դիմումով ներկայացված՝ պետական տուրքի վճարումից ազատելու վերաբերյալ միջնորդությունը:

**Նախագահող՝**

**Անդամներ՝**